ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Երևան 27 փետրվարի 2026 թվական

ՆԻՍՏԸ ՎԱՐԵՑ՝

Հ. Մաթևոսյան շրջակա միջավայրի նախարար/ խորհրդի նախագահ

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Լ. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ,
Ռ. Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ,
Ա. Հակոբյան	շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղար,
Մ. Չաքրյան	շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու, ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի և «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին» արձանագրության ազգային համակարգող,
Ռ. Հարությունյան	շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ/խորհրդի քարտուղար,
Ա. Մուղնեցյան	«Էկոպարսեկ» էկոլոգիական հասարակական կազմակերպության նախագահ,
Ա. Հարոյան	«Էկոպոլիսի» բնապահպանական կենտրոն համայնքային անվտանգության և զարգացման համար» հասարակական կազմակերպության նախագահ,
Ա. Ծատուրյան	«Արայիկ Ծատուրյան» անհատ ձեռնարկատեր,

Ա. Հարությունյան	«Եղվարդ» երիտասարդական բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացուցիչ,
Ա. Հովսեփյան	«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության նախագահ,
Ա. Միրզոյան	«Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ,
Գ. Մնացականյան	««Սևան» երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպության նախագահ,
Հ. Մինասյան	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ,
Հ. Երանոսյան	«Կարոտա» մշակութային կրթական զարգացման հասարակական կազմակերպության քարտուղար,
Հ. Քոչարյան	«Հաջողակ կին» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ,
Լ.Մարգարյան	«Շրջակա միջավայր և առողջություն» հասարակական կազմակերպության նախագահ,
Լ. Փաշինյան	«Յուլի-Դալի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,
Լ. Մանուչարյան	Կլիմայի փոփոխության և կայունության զարգացման ավագ խորհրդատու,
Մ. Ստեփանյան	«Կանայք հանուն բնության» հասարակական կազմակերպության նախագահ,
Մ. Խոյեցյան	«Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության հայաստանյան մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ,
Մ. Տաշչյան	բնապահպանական ոլորտի անկախ լրագրող,
Մ. Ավետիսյան	«Այ Էս Էս Դի» համայանքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» հասարակական կազմակերպության նախագահ,
Ն. Հարությունյան	բնապահպանական ոլորտի փորձագետ,
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ,
Ն. Դոնոյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոնի նախագահ,
Ռ. Խաչատրյան	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի գործադիր տնօրեն,

Տ. Մաթևոսյան	«Արմաշ» գյուղական համայնքների աջակցման և զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ, հեռավար
Տ. Նավասարդյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ,
Վ. Մարտիրոսյան	«Մայֆորեսթ.էյէմ» բնապահպանական հասարակական կազմակերպության գործառնական տնօրեն,
Ս. Մարտիրոսյան	«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ,
Վ. Բուռնազյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության փոխնախագահ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք, օրակարգի հաստատում
ներկայացնող՝ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան/խորհրդի նախագահ,

2. Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով տվյալ տարվա համար նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումների մասին հակիրճ տեղեկատվության ներկայացում
ներկայացնող՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ Լուսինե Ավետիսյան,

3. ՄԱԿ «Կենսբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի՝ COP17-ի նախապատրաստական ընթացիկ աշխատանքների համառոտ ներկայացում
ներկայացնող՝ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան/խորհրդի նախագահ:

1. **Բացման խոսք, օրակարգի հաստատում**

Հ. Մաթևոսյանը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց գործընկերներին շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի «Շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» N 514-Լ որոշմամբ ստեղծված խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) առաջին նիստին մասնակցելու համար:

Նա կարևորեց վերջին շրջանում իրականացված աշխատանքների քննարկումը՝ մասնավորապես նշելով, որ ունեցել է ասուլիս և վարչապետի այց շրջակա միջավայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն), որի ընթացքում ներկայացրել է 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքները: Նախարարը հիմնական շեշտադրումներից առանձնացրել է առաջնահերթ ուղղությունները՝ միաժամանակ ընդգծելով, որ սահմանված առաջնահերթությունները չեն խոչընդոտել Կառավարության ծրագրով նախատեսված ընթացիկ աշխատանքների իրականացմանը:

Հ. Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեց բնապահպանական ոլորտի նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրվածության, տարբեր միջոցառումների և քննարկումների ընթացքում ակտիվ մասնակցության, ինչպես նաև Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով ներկայացված հայտերի համար: Նա նշեց, որ Խորհրդի աշխատանքը պետք է լինի բաց և թափանցիկ, հիմնված մասնագիտական և վստահելի համագործակցության վրա: Ընդգծեց, որ չկան խնդիրներ, որոնք լիազոր գերատեսչությունները կարող են արդյունավետորեն լուծել միայնակ: Նրա խոսքով՝ կարևոր է, որպեսզի աշխատանքներն իրականացվեն մասնակցային քննարկումների, քննադատությունների և հանրային վերահսկողության պայմաններում, և այս առումով Խորհրդի դերակատարումը էական է լինելու:

Հ. Մաթևոսյանն առաջարկեց առանձին հարցերի առաջացման դեպքում ձևավորել հստակ ուղղություններով մասնագիտական խմբեր՝ աշխատանքներն առավել շոշափելի և արդյունավետ դարձնելու նպատակով:

Նա ներկայացրեց նախարարության ակնկալիքները Խորհրդից՝ առաջնահերթ համարելով մասնագիտական և հիմնավորված առաջարկների ներկայացումը: Նրա կարծիքով՝ անհրաժեշտ է իրական խնդիրներին առաջարկել իրատեսական և կիրառելի լուծումներ: Նա վստահեցրեց, որ նախարարությունը պատրաստ է ապահովել որոշումների կայացման ընթացակարգերի առավելագույն թափանցիկությունը և Խորհրդին ներկայացնել աշխատանքային խնդիրները՝ հույս հայտնելով, որ այս հարթակը դառնալու է վստահության և արդյունավետ համագործակցության լավ օրինակ:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը, Հ. Մաթևոսյանն առաջարկեց տվյալ նիստը չհեռարձակել ուղիղ եթերով՝ այն ավելի անմիջական ձևաչափով անցկացնելու նպատակով՝ նշելով, որ նիստի ամբողջական նյութերը կհրապարակվեն: Այնուհետև, օրակարգի հարցերի վերաբերյալ դիտարկումների բացակայության դեպքում, նա առաջարկեց հաստատել օրակարգը:

Օրակարգը միաձայն հաստատվեց:

<u>2. Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով տվյալ տարվա համար նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումների մասին հակիրճ տեղեկատվության ներկայացում</u>

Լ. Ավետիսյանը ներկայացրեց Կառավարության 2021–2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված 2026 թվականի աշխատանքների շրջանակը: Նշվեց, որ նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 22 միջոցառում՝ ապահովելով նաև նախորդ տարիներին մեկնարկած նախաձեռնությունների շարունակականությունը:

Ջրային ոլորտում անդրադարձ կատարվեց հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի ընդունման գործընթացին: Նշվեց, որ մշակված պլանը ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) դրական եզրակացություն, իսկ Կառավարության որոշման նախագիծը գտնվում է մշակման փուլում:

Միաժամանակ շարունակվում են մակերևութային ջրային ռեսուրսների մոնիթորինգի տվյալների արժանահավատության բարձրացման աշխատանքները: Ախուրյանի ավազանի հիդրոլոգիական դիտակետերի արդիականացման շրջանակում արդիականացվել էին Քասախ և Հրազդան գետավազանների յոթ դիտակետեր, այդ թվում՝ երկու ջրամբարային և հինգ գետային:

Անտառային ոլորտում իրականացվել են անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ: Պետական բյուջեի միջոցներով հիմնվել են 65 հեկտար անտառմշակույթներ, իսկ միջազգային դրամաշնորհային միջոցներով վերականգնվել է շուրջ 700 հեկտար անտառային տարածք:

Շարունակական բնույթ է կրում նաև անտառների կառավարման ոլորտի տեխնիկական վերազինումը՝ նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերմամբ: Անտառների պաշտպանությունը վնասատուներից և հիվանդություններից իրականացվել է ամենամյա ավիացիոն կենսաբանական պայքարի միջոցով՝ շուրջ 9000 հեկտար անտառածածկ տարածքներում: 2026 թվականի համար այդ նպատակով նախատեսվել էր 390.9 մլն դրամ ֆինանսավորում:

Անտառային կադաստրի վարման ուղղությամբ ապահովվում է անտառների ազգային տեղեկատվական համակարգի աշխատանքը: Նախատեսվել էր նաև հանրապետության անտառային տարածքներում տեղադրել 330 մշտական փորձահրապարակ՝ անտառների ազգային գույքագրման և մոնիթորինգի իրականացման նպատակով:

Կենսաբազմազանության ոլորտում շարունակվում են բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառման աշխատանքները: Հավաքագրվում են արդիականացված և համակարգված տեղեկատվություն՝ տեսակային կազմի, տարածվածության, վիճակի և պաշարների վերաբերյալ:

Պետական բյուջեի միջոցներով իրականացվում է նաև սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների, ինչպես նաև Սևանա լիճ և նրա ջրհավաք ավազանի ձկան ու խեցգետնի պաշարների տարեկան գնահատումը:

Կլիմայի փոփոխության ուղղությամբ իրականացվել է «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի

նվազեցում» դրամաշնորհային ծրագրի համապատասխան բաղադրիչը, որի շրջանակում ձևավորվել է շենքերի ոլորտում չափողականության, հաշվետվողականության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգը:

Ներկայացվեց նաև «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2026–2030 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունման գործընթացը:

Կարևորվեց «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի ընդունումը կառավարության կողմից, որը նպատակ ուներ ապահովել քիմիական նյութերի անվտանգ գործածության իրավական հենքը:

Շարունակվում են աղտոտված և դեգրադացված հողերի մոնիթորինգի աշխատանքները: Արդիականացվել են շրջակա միջավայրի բաղադրիչների և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերը՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ:

Նաև իրականացվել է հիդրոօդերևութաբանական դիտարկումների և կանխատեսումների ենթահամակարգերի արդիականացում: Զարգացվել են տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմները, ինչպես նաև ստեղծվել է վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների, այդ թվում՝ երաշտի, վաղօրոք նախազգուշացման համակարգ:

Օրակարգային 2-րդ հարցի ավարտին ևս մեկ անգամ ընդգծվեց ծրագրային միջոցառումների հետևողական իրականացման կարևորությունը և ոլորտային համագործակցության շարունակականության ապահովման անհրաժեշտությունը:

Մ. Ավետիսյանը հետաքրքրվեց, արդյո՞ք ջրային ռեսուրսների պահպանման շրջանակում նախատեսվում է կոյուղաջրերի կառավարման համակարգերի կառուցում մարզերում և համայնքներում, հաշվի առնելով, որ ներկայումս կոյուղու համակարգ հիմնականում գործում է Երևանում, իսկ բազմաթիվ համայնքներում այն բացակայում է:

Հ. Մաթևոսյանը պատասխանեց, որ այդ հարցը միջգերատեսչական լիազորությունների շրջանակում է, և նախարարությունը սահմանել է արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները՝ մինչև դրանք կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետելը: Արտադրական կեղտաջրերի արտանետումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ համակարգն ունի բավարար թողունակություն, իսկ կեղտաջրերի բաղադրությունը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Եթե կեղտաջրերը չեն համապատասխանում այդ պահանջներին, արտադրական կազմակերպությունները պարտավոր են իրենց միջոցներով իրականացնել դրանց նախնական մաքրում տեղային մաքրման կառուցվածքներում: Միաժամանակ սահմանվում են նաև կեղտաջրերի միախառնման, համատեղ մաքրման, վտանգավոր կամ բարձր կոնցենտրացիա ունեցող կեղտաջրերի մշակման, ինչպես նաև ռադիոակտիվ կեղտաջրերի ջրահեռացման առանձնահատուկ պայմաններ:

Անդրադարձ եղավ նաև «EU4Sevan» ծրագրի կողմից Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի մեխանիկական արդիականացմանը, որը հնարավոր չեղավ իրականացնել ծրագրի սահմանված ժամկետներում, սակայն այն կշարունակվի «EU4Sevan+» ծրագրի շրջանակներում:

Ա. Միրզոյանը հետաքրքրվեց թափոնների կառավարման և պլաստիկ արտադրանքների կանխարգելման գործընթացից:

Ի պատասխան՝ **Լ. Ավետիսյանը** նշեց, որ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը, որով առաջարկվում է 2027 թվականի հունվարի 1-ից առևտրի օբյեկտներում, հանրային սննդի կետերում, տոնավաճառներում, ցուցահանդես-վաճառքներում, ինչպես նաև բացօթյա և շրջիկ առևտրի կետերում արգելել պոլիէթիլենային պարկերի և տոպրակների, ինչպես նաև պլաստիկից կամ փրփրապլաստից պատրաստված մեկանգամյա օգտագործման տարաների և սպասքի վաճառքը կամ առկայությունը:

Բացառություն կսահմանվի կշռափաթեթավորման և երկրորդային հումքից արտադրված աղբի պարկերի, ինչպես նաև կշռափաթեթավորման համար օգտագործվող կափարիչով տարաների համար:

Ն. Հարությունյանը տեղեկացրեց, որ հանրապետության դպրոցները զինվում են բնագիտական լաբորատորիաներով. աշխարհագրության կաբինետներին տրամադրվում են ստացիոնար, հեռահար օդերևութաբանական կայաններ, որոնք հնարավորություն են տալիս չափել եղանակային տարբեր ցուցանիշներ՝ օդի ջերմաստիճան, քամու ուժգնություն, արևի ճառագայթման ինտենսիվություն և այլն:

Նա առաջարկեց, որ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվի խորհրդատվություն՝ կայանների ճիշտ տեղադրման վերաբերյալ, ինչպես նաև ստեղծվի հավաքագրվող տվյալների միասնական տվյալների բանկ:

Հ. Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեց առաջարկի համար՝ հավելելով հանձնարարել համապատասխան ուսումնասիրություններ իրականացնել ներկայացված առաջարկի վերաբերյալ: Նա նշեց, որ օդի որակի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների հիման վրա տեղեկատվություն տրամադրելու լիազորված միակ մարմինը «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ն է:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցի զարգացման նպատակով Ճապոնիայի կառավարությունից նախատեսվում է ձեռք բերել ժամանակակից ավտոմատ սարքավորումներ (ճապոնական Horiba ընկերության արտադրության) մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի երեք դիտակայանի համար՝ հիմնական աղտոտիչների չափման նպատակով: Նոր դիտակայանները տեղադրվելու են Երևան քաղաքի երեք վարչական տարածքներում՝ ապահովելով օդի աղտոտվածության վերաբերյալ համապարփակ տվյալների հավաքագրում և դրանց օպերատիվ հասանելիություն հանրությանը:

Ա. Հարոյանն առաջարկեց COP-ին ընդառաջ ստեղծել կովկասյան կամ տարածաշրջանային կենսաբազմազանության համագործակցության հարթակ, որը

կնպաստի Հայաստանի դերի բարձրացմանը միջազգային բնապահպանական քաղաքականության մեջ:

Հ. Մաթևոսյանը պատասխանեց, որ Հայաստան-Վրաստան անդրսահմանային գեոպարկի ստեղծման շրջանակներում աշխատանքներ տարվում են:

Ն. Վարդանյանը և **Լ. Փաշինյանն** անդրադարձան ՇՄԱԳ օրենքի, ենթաօրենսդրական ակտերի փոփոխություններին և առկա բացերին: Ի պատասխան՝ նախարարը նշեց, որ առաջիկայում կկազմակերպվեն հանրային քննարկումներ իրավական կարգավորումների փոփոխությունների վերաբերյալ:

Տ. Մաթևոսյանն անդրադարձավ համայնքներում խոզանների այրման խնդրին՝ նշելով, որ այն լուրջ մարտահրավեր է և անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր դրա կանխարգելման ուղղությամբ:

Ի պատասխան՝ **նախարարը** նշեց, որ մարզային այցերի ընթացքում անձամբ իրականացնում է բացատրական աշխատանքներ համայնքների բնակիչների հետ: Նա նաև ընդգծեց, որ այդ ուղղությամբ իրականացվում են իրազեկման և բացատրական աշխատանքներ՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գործընկերների հետ համատեղ:

Վ. Բուռնազյանը հետաքրքրվեց, թե իշխանի մանրաձկան բացթողնումը Սևանա լիճ ինչու՞ է իրականացվել պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Ե՞րբվանից է պետությունը կրկին սկսել ֆինանսավորել այդ գործընթացը և որն է դրա պատճառը:

Հ. Մաթևոսյանը պատասխանեց, որ 2022 թվականից Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամի պահպանման ծախսերի մասով հատկացումներ տրամադրվել են պետական բյուջեից՝ հիմնադրամի առողջացմանն ուղղված: Եվ այդ ծախսերը յուրաքանչյուր տարի նվազում են:

Նա հավելեց, որ Սևանի իշխանի պաշարների վերականգնման նպատակով պետական բյուջեի ֆինանսավորմամբ շարունակվել են մանրաձկան բացթողնման աշխատանքները՝ նախատեսված 500 000 հատ փոխարեն լիճ է բաց թողնվել շուրջ 836 000 հատ ամառային և գեղարքունի ենթատեսակների մանրաձուկ՝ նախորդ տարվա 390 000 հատի դիմաց:

Սևանի կողակի բնական պաշարների վերականգնման նպատակով հավաքագրվել է շուրջ 3000 հատ ծնողական կազմ, որից ստացված մանրաձուկը նախատեսվում է 2027 թվականին բաց թողնել լիճ: Նրա խոսքով՝ սա աննախադեպ գործընթաց է: Առաջին անգամ գետային էկոհամակարգերում արժեքավոր ձկնատեսակների վերարտադրության նպատակով հավաքագրվել է նաև կարմրախայտի շուրջ 2500 հատ ծնողական կազմ: Արհեստական վերարտադրության արդյունքում ստացվել է 80 000 հատ մանրաձուկ, որից 50 000-ը նախատեսվում է 2026 թվականին բաց թողնել Ձորագետի վերին հոսանքներում:

Վ. Բուռնազյանը նշեց, որ «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի մասնագետները մոնիթորինգ են իրականացրել շուրջ 125 փիէկում, և դրանցում առկա ձկնանցարաններն ու ձկնապաշտպան ցանցերը հաճախ չունեն բավարար

ֆունկցիոնալ նշանակություն: Նա նաև անդրադարձավ էկոթողքերի խնդրին՝ նշելով, որ, եթե նախատեսվում է կարմրախայտի բացթողնում գետեր, անհրաժեշտ է աշխատանք տանել փիէկերի շահագործողների հետ, որպեսզի ապահովվեն արդյունավետ ձկնանցարաններ, ձկնապաշտպան ցանցեր և էկոթողքեր, որոնք թույլ կտան ձկներին բնականոն կերպով ապրել գետային էկոհամակարգերում: Բացի այդ, նա հետաքրքրվեց, թե երբ է նախատեսվում ընդունել Կենսաբազմազանության ռազմավարությունը:

Հ. Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեց բարձրացված մտահոգությունների համար և նշեց, որ այդ ուղղությամբ հետևողական աշխատանքներ կիրականացվեն: Ինչ վերաբերում է Կենսաբազմազանության ռազմավարությանը, նա տեղեկացրեց, որ այն մոտ օրերս կհաստատվի: Միաժամանակ ընդգծեց, որ Հայաստանը նաև կարևոր ձեռքբերում ունի այդ ոլորտում. Հայաստանը աշխարհի 7-րդ երկիրն է, որը սահմանված ժամկետներում ներկայացրել է Կենսաբազմազանության 7-րդ ազգային զեկույցը:

3. ՄԱԿ «Կենսբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի՝ COP17-ի նախապատրաստական ընթացիկ աշխատանքների համառոտ ներկայացում

Հ. Մաթևոսյանը ներկայացրեց, որ COP17-ի նախապատրաստական աշխատանքները գտնվում են ակտիվ փուլում: Ներկայումս ընթանում են անհրաժեշտ շինարարական աշխատանքներ, ինչպես նաև իրականացվում են լոգիստիկ և կազմակերպչական միջոցառումներ, այդ թվում՝ մուտքի արտոնագրերի տրամադրման գործընթացի հետ կապված աշխատանքներ: Նախատեսվում է օդանավակայաններում թռիչքների թվի ավելացում: Նախատեսվում է մուտքի արտոնագրերի հատուկ ռեժիմի կիրառում: Կգործարկվեն հատուկ առանձնացված տրանսպորտային միջոցներ, որոնք կսպասարկեն պատվիրակություններին հյուրանոցներից մինչև «Կապույտ» և «Կանաչ» գոտիներ և հակառակ ուղղությամբ,
Նա առաջարկեց դիտել COP 17-ի կարգախոսը և տարբերանշանը մեկնաբանող տեսահոլովակը: Նա նշեց, որ տարբերանշանի համար ընտրվել է Երևանյան կապտաթիթեռը, որ Հայաստանի լեռնաշխարհին բնորոշ կարմիրգրքյան էնդեմիկ տեսակ է և կենսաբազմազանության վառ օրինակ: Համաժողովի կարգախոսն է՝ «Գործել հանուն բնության»: Հավելեց, որ տեսահոլովակը չի օգտագործվելու գովազդային նպատակով, այն ստեղծվել է կարգախոսը ներկայացնելու և տարբերանշանի ձևավորումը մեկնաբանելու համար: Եվս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամներին համատեղ արդյունավետ քննարկման համար:

Հ. Երանոսյանն առաջարկեց COP17-ի նախապատրաստական ընթացիկ աշխատանքների շրջանակում անդրադառնալ նաև հետևյալ ուղղություններին՝ ավանդական գիտելիքի դերը կենսաբազմազանության պահպանության

քաղաքականության մեջ, հանրային մասնակցության և քաղաքացիական գիտակցության բարձրացմանը միտված արշավի իրականացում, ինչպես նաև «The Nature–Culture Dialogue toward COP17» թեմատիկ երկխոսության կազմակերպում:

Հ. Մաթևոսյանը նշեց, որ ծանոթ է ներկայացված առաջարկին և նախարարության ոլորտային պատասխանատուները կզբաղվեն այդ հարցով: Նա նաև հավելեց, որ բանակցությունների ընթացքում հաճախ է ընդգծվում հայկական մշակույթի և բնության միջև առկա սերտ կապը:

Խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին մի շարք հարցեր՝ կապված COP17 համաժողովի կազմակերպման և անցկացման գործընթացի, գրանցման և մասնակցության կարգի հետ: Հարցեր են հնչել նաև բնապահպանական այլ ոլորտների վերաբերյալ՝ մասնավորապես թափոնների կառավարման, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող մի շարք ընթացիկ խնդիրների մասին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Արձանագրեց՝ Ռ. Հարությունյանը